

**«ԽՄԲԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ» ԱՐՏԱՑՈՒՄԸ Զ. ՍԹԵՅՆԲԵՔԻ «ՑԱՍՄԱՆ ՈՂԿՈՒՅՉՆԵՐ» ՎԵՊՈՒՄ**

Ամերիկացի արձակագիր Ջոն Սթեյնբեքի գրական ժառանգությունն առանձնանում է հարուստ գաղափարական հիմքով, կերպարների բազմազանությամբ, շրջապատող իրականության հնարավորինս ճշմարտացի արտացոլմամբ: Գրողին խորապես հուզում են անհատ-հասարակություն փոխհարաբերությունները, ինչն էլ իր արտացոլումը գտավ նրա «խմբի տեսության» մեջ, որի շրջանակներում գրողը փորձել է բացահայտել մարդկանց խմբակային վարքագծի օրինաչափությունները: Նա գտնում էր, որ մարդն իր բնույթով երկակի արարած է. մի կողմից նա «խմբային» կենդանի է, մյուս կողմից՝ անհատ, որը չի կարող գոյություն ունենալ իր երկրորդ բնույթով, քանի դեռ չի իրագործել իր առաջնային նշանակությունը:

Վերոնշյալ տեսությունն իր վառ արտահայտությունն է գտել «Ցամանակի ողկույզներ» (The Grapes of Wrath) վեպում, որին կանդիդատականք՝ խմբին բնորոշ սոցիալ-հոգեբանական հատկանիշները, վարքագծի օրինաչափությունները վերհանելու նպատակով:

Վեպը կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասի. 30 գլուխներից 14-ը նվիրված են Ջոուզների ընտանիքին, իսկ 16-ը ներկայացնում են ընդհանուր տիրող իրավիճակը և հեղինակի մեկնաբանությունը: Սթեյնբեքը դրանք անվանում է «ընդհանուր գլուխներ»: Ամերիկյան քննադատական գաղափարության մեջ այս գլուխներն ընդունված է անվանել «ներդիր» կամ «ներքին»: Լ. Մարքսը նշում է, որ Սթեյնբեքն օգտագործում է այս ներդիր գլուխները՝ նպատակ ունենալով Ջոուզների ընտանիքի միգրացիայի մասնավոր պատմությունը ներառել 1930-ական թթ. հասարակական շարժումների ավելի լայն համատեքստում<sup>1</sup>: Նմանատիպ կարծիքի է և Գ. Չլոբինը, որը նշում է երկու գեղարվեստական տեքստերի միախառնումը: Քննադատն «ընդհանուր գլուխներն» անվանում է «երգչախմբային», քանի որ կարծում է, որ այդ ոձի գլուխների համար ավելի բնորոշ հատկանիշ է վառ արտա-

<sup>1</sup> Marks L. J Thematic Design in the Novels of John Steinbeck Text. L. J. Marks. TheHague: Mouton&Co., 1969. p. 69.

Յուրաքանչյուր ոք պետք է կերտի իր սեփական պատմությունը, եթե ոչ, ապա նրա գոյությունը չի կայանա, կանհետանա նրանց հետ, որոնք դուրս են մնացել պատմությունից: Յուրաքանչյուրի կյանքը և նրա պատկերացրած ճշմարտությունը հենց իր դերն է, և նա պարտավոր է խաղալ իր այդ դերը, նա պարտավոր է ընդունել այդ երկու հակադիր աշխարհները, և առհասարակ, բոլոր հակադրությունները, քանի որ դրանց միավորումից է ծնվում «մսից և ոսկորից» մարդը, նա, որին վերջավորության մեջ տրված է և՛ մարմին, և՛ հոգի, և՛ հավերժություն, պատմություն և պատմական միջարկություն կամ ներքին բովանդակություն, անկատարելություն, բայց նաև կատարյալին հասնելու բուռն ցանկություն»<sup>20</sup>:

**Բանալի բառեր.** -*արվեստ, լեզու, փոխադասական վեպ, նիվոլա:*

**Резюме  
Петросян Рузанна**

**Проблемы искусства и литературы по Мигелю де Унамуну**

В статье представлены проблемы искусства и литературы по испанскому писателю Мигеля де Унамуну. Автор предлагает традиции философской прозы создавая новые принципы философского романа-Нивола.

**Summary  
Petrosyan Ruzanna**

**The Problems of Arts and Literature According to Miguel de Unamuno**

This paper presents the problems of arts and literature according to the Spanish writer Miguel de Unamuno. The author suggests the traditions of philosophical prose creating new principles of philosophical novel-Nivola.

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 42-45:

հայտված բազմաձայնությունն ու ընդհանրությունը, որը երգչախումբ է հիշեցնում: Ըստ Չլորինի՝ երգչախումբային գլուխները միանում էին Ջոուզների ձայնին, իսկ այս միավորումը հենց ողջ ժողովրդի ձայնն է: Այստեղից էլ գեղարվեստական իրականության տարածականությունը, լայնածավալությունը, մեկ խոսքով՝ նրա էպիկականությունը<sup>2</sup>: «Խմբի տեսության» համատեքստում «ընդհանուր գլուխներն» ընթերցվում են որպես սոցիալական մակրոխմբերի և ուժերի պատկերման անհրաժեշտ պայման, ուժեր, որոնց ստիպված են լինում բախվել Ջոուզները: Հեղինակային մեջբերումներն անհրաժեշտ են նաև բացատրելու համար «միկրոխմբի» աճող ագրեսիան՝ արտաքին գործոնների ազդեցության ներքո:

Առաջին իսկ էջերից Սթեյնբեքը կերտում է միասնական, մոնոլիտ հանրային կերպար՝ պատկերելով Օքլահոմայի բնակիչներին որպես առանձին անհատների, որոնք, սակայն, ունեն ընդհանուր ձակատագիր և որոնց միավորում են ընդհանուր ցանկությունները, նպատակները: Այս կոլեկտիվ հանրային գրողն անվանում է հավաքական նշանակություն ունեցող մեկ բառով՝ «մարդիկ»: Բառի նշանակությունն այնքան է ընդլայնվում, որ թույլ է տալիս Սթեյնբեքին հիշատակել այնպիսի նեղ անձնական մանրամասներ, որոնք սովորաբար վերաբերում են ինչ-որ կոնկրետ կերպարի, հերոսի կենցաղի նկարագրությանը: «Անկողիններում պառկած Մարդիկ լսեցին, որ քամին հանդարտվեց: Նրանք արթնացան այն վայրկյանին, երբ քամու սուլոցը հեռվում մարեց: Նրանք պառկած ունկնդրում էին լուռությունը»<sup>3</sup>:

Քանի որ օբյեկտիվ ու սուբյեկտիվ սոցիալ-տնտեսական պատճառները անհնար դարձրին մարդկանց պարզագույն գոյատևումը, մարդկային հանրային հայտնվում է շարժման մեջ՝ տեղահանվում իրենց բնակավայրերից և ճանապարհ ընկնում դեպի Կալիֆոռնիա: Ճանապարհը, ստանձնելով ողջ ստեղծագործության միջանցիկ դերը, ընդհանուր իրադարձային կոնտեքստում հատուկ նշանակություն է ձեռք բերում: Հենց ճանապարհին է ընթերցողը հանդիպում ստեղծագործության գլխավոր հերոսներին՝ Թոմ Ջոուզին, Քեյսին և այլոց: Թոմը, ինչպես և Քեյսին, դուրս է մնում «միկրոխմբից»՝ իր ընտանիքից:

2 Злобин Г. Страницы американской литературы XX в. Текст. Г. П. Злобин. М.: Художественная литература, 1985. с. 25.

3 Steinbeck J. The Grapes of Wrath and Other Writings, 1936-1941 Text. J. Steinbeck. N. Y.: Literary Classics of the United States, 1996. p.6-7.

Առանձնանալու պատճառը նրա բանտային կենսափորձն է՝ հերոսը մարդասպանության համար չորս տարի անցկացնում է ազատագրված մեջ. իր ընտանիքից բացի, այլ հասարակական շերտերի հետ առնչվելը, միանգամայն այլ կարգուկանոնով ապրելը հեռացնում են նրան իր խմբից: Սակայն նա շարունակում է մնալ իր ընտանիքի մի մասը, այսպիսով միաժամանակ պատկանում է 2՝ մեծ և փոքր խմբերի, ինչը թույլ է տալիս նրան ավելի գիտակից և օբյեկտիվ դատել: Բանտում ստացած կենսափորձով իմաստնացած՝ նա դուրս է գալիս ճանապարհ՝ կյանքի նոր փուլ սկսելու: Մշտական շարժման մոտիվը, որ վերածվում է կյանքի հավերժական ձգտման, Սթեյնբեքը զարգացնում է հաջորդ գլխում, որտեղ յուրաքանչյուր կենդանի արարածի ապրելու ձգտման պոետիկ նկարագրությունը մարմնավորում է կրիայի կերպարը, որը կյանքի համառ ձգտման խորհրդանիշն է: Այստեղ մենք հանդիպում ենք Սթեյնբեքի այն գաղափարին, որ առանձին էակները կարող են վերանալ, մեռնել, սակայն կյանքը շարունակվում է: Ըստ Դ. Փայզերի՝ Ջոուզները, հայտնվելով ճանապարհին, իրենց շրջապատում են ընտանիքի գոյության համար ամեն անհրաժեշտ պարագայով, քանի որ նրանց մեջ դեռ անմար էր կենսական ուժը: Նրանք լուծում են խնդիրներ ոչ միայն անհատական ջանքերի, այլև խմբի ուժի շնորհիվ: Ամենաձայրահեղ պահերին, երբ անհրաժեշտ էր համատեղ լուծել խնդիրը, Ջոուզների ընտանիքը դառնում է հզոր, միասնական օրգանիզմ<sup>4</sup>: Նշենք, որ սովորական պայմաններում Ջոուզների ընտանիքի անդամները՝ լինելով խմբի մանրակերտ, սոցիալական միավոր, իրենցից ներկայացնում են լավ կազմակերպված արարիչ հանրույթ, հստակ որոշված իրավունքներով և պարտականություններով: Կյանքի նոր պայմաններին հարմարվելով՝ Ջոուզների ընտանիքը ստիպված էր կրել փոփոխություններ, վերակառուցվել: Ճանապարհին մահանում են Պապն ու Տատը, հեռանում է որդին՝ Նոյը, փախչում է Ռոզա Սարոնայի ամուսին Կոննին: Այս ամենը Ռ. Հինտոնին հնարավորություն տվեց վեպն անվանել փոփոխությունների վեպ, որտեղ արտաքին փոփոխությունները համապատասխանաբար ազդում են ընտանիքի վրա: Ջոուզների փոփոխվող աշխարհընկալման միջոցով Սթեյնբեքը ցույց է տալիս, որ սոցիալական ցնցումների տարիներին

4 Pizer D. Documents of American Realism and Naturalism Text. D. Pizer. Carbondale, IL: Southern Illinois University Press, 1998. p. 69.

ընտանիքը չի կարող պարփակվել ինքն իր մեջ, մեկուսանալ հասարակությունից, այն պետք է ընդլայնվի և ընդունի նոր, ոչ արյունակից անդամների, ում հետ կապված են համընդհանուր դժբախտությամբ<sup>5</sup>: Դրա հետ մեկտեղ, ինչպես ենթադրում է քննադատը, ընտանիքը փոփոխություններ է կրում ոչ միայն քանակական կազմում, այլև ընտանեկան հիերարխիայում: Ռ. Հինտոնը պնդում է, որ քաղաքացիական իրավունքներից զրկված մարդիկ կարող են գոյատևել միայն միավորվելով, իրենց ուսերին վերցնելով իրենց և պատմական ճակատագրով իրենց հետ կապված այլ մարդկանց կյանքի համար պատասխանատվության ծանր բեռ<sup>6</sup>: Այսպիսով, Հինտոնը հավատացած է, որ մի ընտանիքի պատմության պրիզմայի միջոցով Սթեյնբեքը վերստեղծում է մարդկային ոգու էվոլյուցիայի փուլերը:

Սթեյնբեքը ցույց է տալիս, որ բնակչության գիտակցությունում ձևավորվում է ագրեսիայի կիրառման գաղափարը՝ ծառայեցնել այն խմբի շահերի համար, հանուն խմբի միասնականության և գոյատևման: Եթե քննարկենք ագրեսիա հասկացության խմբակային դրսևորումը, ապա կտեսնենք, որ սթեյնբեքյան հասարակությունը դասական, ագրեսիվ խմբի մասին տեսական վերլուծության գործնական օրինակն է: Սթեյնբեքը հավատարիմ է մնում Զ. Ֆրոյդի և Կ. Լորենցի այն պնդմանը, որ ագրեսիան մարդկային էության մի մաս է, բնազդ: Համաձայն այս տեսության՝ ագրեսիվ էներգիան անընդհատ կուտակվում է մեր ներսում ու պոռթկում: «Ցասման ողկույզներ» վեպի վերնագիրը վերջին մտքի գեղարվեստական ձևակերպումն է: Ագրեսիայի վերաբերյալ մեկ այլ տեսություն, որն առաջ են քաշել Լ. Բերկլիցն ու Ա. Բանդուրան, ևս միանշանակորեն ապացուցվում է՝ զայրույթի և թշնամանքի պատճառը, հետևաբար և ագրեսիայի դրսևորման պատճառը ֆրոյստրացիան է:

Հոգեբաններն առանձնացրած են ագրեսիայի երկու հիմնական տեսակները՝ բնածին ագրեսիան և գործիքային ագրեսիան, իրենց ամենաանմիջական դրսևորումն են գտնում վեպում: Նախկին ագարակատերերը, ֆրոյստրացիա ապրելով, ականայից գիտակցում են ագրեսիայի ուժը և հասկանում, որ իրենց ագրեսիան կարող են ծա-

5 Hinton R. Steinbeck's the Grapes of Wrath Text. R. Hinton. Explicator.- 1998.-Vol. 56. Issue: 2.-P. 101.

6 Նոյն տեղում, էջ 102-103.

ոայեցնել նպատակի (գործիքային ագրեսիա), իսկ հակառակ ծամբարում ականատես ենք թշնամական ագրեսիայի դրսևորման, որի նպատակը մասքիմալ շահույթներ ստանալն էր ուրիշի աշխատանքի հաշվին:

Բենզալցակայանի աշխատակիցների գրույցը դիպուկ նկարագրում է միևնույն էթնոսում, նույնիսկ միևնույն ռասայի ներկայացուցիչների միջև առկա հակակրանքը. «Դու, ես ու դու մարդիկ ենք, իսկ այդ օքիններն իրենց Օքլահոմայում ոչ մի հասկացություն չունեն: Նրանք նույնիսկ մարդու նման չեն: Իսկական մարդը երբեք նրանց նման չի ապրի, իսկական մարդը չի հաշտվի այդպիսի կեղտի, անաստվածության հետ: Այդ օքիններին դժվար է կապիկից զանազանելը»<sup>7</sup>:

Նրանց համար մեկ է դիմացինի վիճակը, իրենք իրենց մարդ են զգում ուրիշի դժբախտության ֆոնին: Բացակայում է մարդասիրություն, կարեկցանք, և այս բացասական զգացողություններն էլ իրենց հերթին միավորում են այդ մարդկային հանրույթին: Մինչդեռ նրանց հակակաշիռ հանդես է գալիս Քեյսիի գաղափարախոսությունը՝ անսահման մարդասիրական, որ սիրում է մարդ արարածին՝ իր բոլոր մեղքերով և հանցանքներով հանդերձ, քանի որ նա մարդ է, հետևաբար կատարյալ, և արժանի սիրո և մեծարման, և բացառում մարդուն պարսավելը. «Բոլորը մեղավոր են: Ի՞նչն է համարվում ՄեՂԹ: Այն, ինչի կապակցությամբ մենք վստահություն չենք զգում: Իսկ նրանք, ովքեր վստահ են ամեն ինչում, և իրենց ոչ մի բանում մեղավոր չեն ձանաչում, սրիկաներ են: Եթե Աստծո տեղը լինեի, հետույթին տալով կքշեի նրանց հանդերձյալ աշխարհ: Տեսնել նրանց չեմ կարողանում: Մարդն ինքն է ստեղծում իր մեղքերը»<sup>8</sup>:

«Մենք»-ի ձևավորման հասունանալը ֆրոյստրացիայի և ագրեսիայի հողի վրա առավել մանրամասն նկարագրվում է 17-րդ գլխում.

«Հարազատ անկյան կորուստը դառնում էր ընդհանուր կորուստ, իսկ արևմուտքում սպասվող երջանիկ կյանքը՝ ընդհանուր երազանք: Եվ պատահում էր այնպես, որ մի երեխայի հիվանդության պատճառով հուսահատությունը համակում է քսան ընտանիքին էլ, կամ հար-

7 Steinbeck J. The Grapes of Wrath and Other Writings, 1936-1941 Text. J. Steinbeck. N. Y.: Literary Classics of the United States, 1996. p.189.

8 Steinbeck J. The Grapes of Wrath and Other Writings, 1936-1941 Text. J. Steinbeck. N. Y.: Literary Classics of the United States, 1996. p.179.

յուր մարդուն միաժամանակ: Եվ հարյուրը միաժամանակ լուրջությամբ էին պահպանում ողջ գիշեր և աղոթում, իմանալով, որ ահա այն վրանում կին է ծննդաբերում, իսկ առավոտյան հարյուր մարդ ուրախանում էր նոր մարդկային կյանքի լույս աշխարհի գալով: Երեկոյան խարույկի մոտ մոտ 20 ընտանիք միավորվում էին մեկի...»<sup>9</sup>:

Ամերիկյան սթեյնբեքագիտության մեջ վեպի գլխավոր գաղափարի մասին ձևավորվել է կարծիք, համաձայն որի այն հաստատում է եղբայրության և մարդկության միասնականության կենսական անհրաժեշտությունը, միասնական ուժի գոյությունը, որը կօգնի մարդկանց դիմակայել ամեն ինչի՝ նույնիսկ բնական աղետի: Մարդկանց մեկ ամբողջի մեջ միավորման մասին խոսում են մի շարք ամերիկացի հետազոտողներ: Այսպես, Ու. Ֆրենչը համոզված է, որ հեղինակը պատկերում է Ջոուզների վերածումը ագրեսիվ, իրենց խնդիրների վրա կենտրոնացած մարդկանցից, ովքեր անհանգստացած էին միայն իրենց սերնդի պահպանմամբ և շարունակմամբ, անհատների մի խմբի, ովքեր իրենց դառը փորձից գիտեն, որ մարդու կյանքը կախված է եսասիրական բնազդների ճնշումից և մնացած մարդկանց արժանիքներն ընդունելուց<sup>10</sup>: Ըստ նրա՝ Ջոուզների ձակատագիրն այժմ կախված է նրանից, թե կհաջողվի՞ հասարակությանը, ինչպես իրենց, հաղթահարել «ընտանեկան նախապաշարմունքները», կանի նույն եզրակացությունը, ինչը և Ջոուզները: Ֆ. Քարփենտերը գտնում է, որ «Ցասման ողկույզների» ողբերգությունը նպաստում է վեպի նոր գաղափարի ստեղծմանը. սերը մարդկանց հանդեպ, եթե այն եսասիրական չէ, կարող է գերազանցել նույնիսկ ընտանիքի հանդեպ սիրուն<sup>11</sup>: Ընդունելով վերոնշյալ կարծիքների իրավացիությունը՝ հարկ ենք համարում նշել, որ, սկսելով ընթերցողի ուշադրությունը անհատական հասունացման գործընթացի, Ջոուզների հոգեբանական աճի վրա, քննադատները ուշադրություն չեն դարձնում «խմբի տեսության» ունեցած ազդեցությանը վեպի վրա, կամ, ինչպես ասում է Լ.Մարքսը, ստեղծագործության գլխավոր գաղափարը տեսնում են նրանում, որ

9 Steinbeck J. The Grapes of Wrath and Other Writings, 1936-1941 Text. J. Steinbeck. N. Y.: Literary Classics of the United States, 1996. p.166.

10 French W. The Social Novel at the End of an Era Text. W. French. -Carbondale: Southern Illinois University Press, 1966. p.44.

11 Carpenter F. I. American Literature and the Dream Text. F. I. Carpenter. Freeport, NY: Books for Libraries Press, 1968. p. 172.

վեպում Սթեյնբեքն արմատապես փոխեց իր հայացքը խմբային հանրույթի վերաբերյալ. «Կույր, խուլ, սեփական կամքը չունեցող կենդանուց խումբը վերածվեց մտածող, իր գործողությունները գիտակցող, ընդհանուր գործի համար կովի պատրաստ կոլեկտիվի»<sup>12</sup>: Այնուամենայնիվ, վեպը նախ և առաջ հանդիսանում է Սթեյնբեքի խմբի կոնցեպցիայի մարմնավորման գեղարվեստական նմուշ: Նա հավատարիմ է մնում իր հետաքրքրություններին՝ խմբի ստեղծման և գործունեության օրինաչափությունների, սոցիալական հանրույթների փոխհարաբերությունների բացահայտմանը:

Վեպի կենտրոնական հարցադրումներից է սոցիալական խմբի՝ թշնամական աշխարհում գոյատևելու կարողության ուսումնասիրությունը: Սթեյնբեքը ցույց է տալիս, որ մարդկային հանրույթները պայքարում են միմյանց դեմ հողի, գոյության միջոցների տիրապետելու հնարավորության համար: Համոզված լինելով, որ դա բնական, երբևէ չդադարող գործընթաց է, որ պայմանավորված է պայմանական և բնական գործոններով, Սթեյնբեքը նկարագրում է երկու թշնամական, հակասական ուժերի բախում, որտեղ «օբիները» (Օբլախոմայից գաղթածներին տեղի բնակիչները արհամարհանքով այդպես էին կոչում) իրենցից ներկայացնում են կատաղի մակրոխմբի ուժ, որ ինքակառավարվում էր ինքնապաշտպանական և սերնդի շարունակության բնագրով, իսկ Կալիֆոռնիայի բնակչությունը, մեկ ուրիշ մակրոխումբ, բացասական կարծրատիպերով ընդունելով փախստականներին, իրենից ներկայացնում է ուժ, որ ստիպված էր իրենց կարծիքով պաշտպանվել: Սակայն վերջիններիս շահերը պաշտպանում էին ոչ թե իրենք, այլ՝ շերիֆներն ու այսպես կոչված «ամերիկյան լեգեոն»-ի ուժերը:

Ըստ Ջ. Հանթերի՝ որքան էլ Ջոուզները ենթարկվում են թվաքանակի փոփոխության, ընդունված ձևական բնույթի հարաբերությունները իրենց տեղն են զիջում ավելի ամուր, խորը կապերի, իսկ հոգևոր-գաղափարական մերձությունը դառնում է ավելի թանկ, քան պարզապես արյունակցությունը՝ ծնելով համընդհանուր միասնականություն և փոխադարձ կապվածություն<sup>13</sup>:

12 Marks L. J. Thematic Design in the Novels of John Steinbeck Text. L. J. Marks. The Hague: Mouton & Co., 1969. p. 73, 74.

13 Hunter J. P. Steinbeck's Wine of Affirmation in The Grapes of Wrath Text. J. P. Hunter. Essays in Modern American Literature. Ed. by Richard E. Langford, et. al., Deland, Florida: Stetson University Press, 1963. p.78.

Սթեյնբեքը ցույց է տալիս, թե ինչպես է վեպի ընթացքում գնալով հասունանում միասնականության զգացումը: Մարդկանց միավորող միջոցներից է երաժշտությունը, երգը, որի արդյունքում ծագում է մտերմությունը: Դրա մասին է խոսում տիկին Ուիլսոնը. «...երգում ես, իսկ մարդիկ կանգնած են շուրջդ, և թվում է, թե դու նրանցից անբաժան ես: Ես ինձ այնքան լավ էի զգում այդ ժամանակ. ոչ բոլորին է տրված դա զգալը, և այնքան լեցուն է հոգիդ, և մոտ ես մարդկանց»<sup>14</sup>:

Խմբի տեսության ամենացայտուն դրսևորումը Ռ. Դեմոտը տեսնում է 15-րդ գլխում, քանի որ հենց այդտեղ է արտացոլված «մենք»-ի ստեղծումը առանձին, բազմաթիվ «ես»-երից<sup>15</sup>: Դառնալով խմբի մասնակիցներ՝ անհատները ստանում են ուժ, քանի որ ընդունում և արտահայտում են խմբի գաղափարախոսությունը, հետաքրքրությունները: Մարդկային հանրություն պարփակված ուժը անդամներից յուրաքանչյուրին դարձնում է ավելի ուժեղ, և հակառակը՝ խմբի յուրաքանչյուր անհատի ուժը իր հերթին հանդիսանում է խմբի ուժի գոյացման աղբյուր: Այսպիսով, եթե ավելի վաղ շրջանում Սթեյնբեքը շեշտադրում էր ագրեսիվ սկիզբը, ապա «Ցասման ողկույզներ» վեպում գրողը նշում է ևս մեկ գործոնի կարևորությունը՝ մարդ արարածի համագործակցության ձգտումը՝ հաստատելով այն միտքը, որ «աշխատել, ստեղծել, ոչ միայն ինքդ քեզ համար հենց մարդ լինելն է»<sup>16</sup>: Սթեյնբեքը հանգում է այն մտքին, որ խմբի պահպանման համար ագրեսիան բավարար չէ, անհրաժեշտ է նաև համագործակցություն: Ըստ նրա՝ կոլեկտիվիզմը, համագործակցությունը հանդիսանում են այդ խմբի կազմավորմանը մասնակցող ուժեր: Միավորումը, «ես»-ից «մենք»-ի անցումը տեղի է ունենում մարդասիրության, փոխադարձ վստահության հիման վրա:

**Բանալի բառեր՝** Ջոն Սթեյնբեք, Ցասման ողկույզներ, խմբի տեսություն, անհատ-հասարակություն

14 Steinbeck J. The Grapes of Wrath and Other Writings, 1936-1941 Text. J. Steinbeck. N. Y.: Literary Classics of the United States, 1996. p.230.

15 DeMott R. Steinbeck's Typewriter: Essays on His Art Text. R. DeMott. N.Y.: Whitston Pub. Co., 1996. p.183.

16 Стейнбек Д. Собрание сочинений Текст.: в 6 т. Т. 3. Гроздья гнева; Консервный ряд: Романы / Д. Стейнбек; перевод с англ. М.: Правда, 1989. с. 157.

## Резюме

СОНЯ АПРЕСОВА

Отражение "теории группы" в романе Дж. Стейнбека "Гроздья гнева"

В статье анализируется сформированная Дж. Стейнбеком "Теория группы" и ее воплощение в романе "Гроздья гнева". В частности, рассматривается эволюция концепции "группа", переход от понятия "я" к понятию "мы".

## Summary

SONYA APRESOVA

The Reflection of «Group Theory» in J. Steinbacks novel «The Grapes of Wrath»

The article analyzes the "Group theory" and its implementation in the novel "The Grapes of Wrath" by John Steinbeck. The author of the article studies the evolution of the "group" concept, the transition from "I" to "we".